ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 71/5

03-ը փետրվարի 2024 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դասագրքերի ուսումնական և ուսումնամեթոդական այլ գրականության հրատարկման երաշխավորման գործընթացի կանոնակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում դասագրքերի ուսումնական և ուսումնամեթոդական այլ գրականության հրատարկման երաշխավորման գործընթացի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2024թ. փետրվարի 03-ի նիստի թիվ 71/5 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՅԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական և այլ գրականության (այսուհետև՝ **երաշխավորման ենթակա աշխատանքներ**) հրատարակման երաշխավորման գործընթացի կազմակերպման իրավական հիմքերը, սկզբունքները, երաշխավորման ենթակա աշխատանքներին ներկայացվող պահանջները, գրախոսման և երաշխավորման ընթացակարգը:
2. Սույն կանոնակարգը մշակվել է ԵՊՀ ԻՄ-իմ գործող իրավական ակտերին համապատասխան և ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի պահանջներից ելնելով:

2. ԵՐԱՇԽԱՎՈՐՎՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

3. **Դասագիրքը** ուսումնական-տեսական հրատարակություն է, ուսումնական ծրագրում ընդգրկված որևէ առարկայի/գիտակարգի բոլոր թեմաների համակողմանի, համակարգված, համեմատաբար պարզ ու ընկալելի շարադրմամբ

գիտահետազոտական/գիտամեթոդական աշխատանք, որի նպատակը հիմնարար, առանցքային գիտելիք տալն է: Բուհական դասագիրքն անպայման պետք է ունենա բուհի ու գիտական ստորաբաժանման գիտական խորհուրդների երաշխավորություն և հաստատված լինի ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից (ծավալը՝ առնվազն 7,5 տպագիր մամուլ):

4. **Ուսումնական ձեռնարկը** ուսումնական-տեսական հրատարակություն է, որը մասամբ փոխարինում է դասագրքին կամ լրացնում այն՝ ներառելով որևէ մասնագիտության/կրթական ծրագրի կամ դրա առանձին բաղադրիչ(ներ)ի նեղ մասնագիտական, գիտական-կիրառական բնույթի շարադրանք: Ձեռնարկը կարող է ներառել ոչ միայն համընդհանուր ճանաչում ունեցող գիտելիքի, այլև խնդրահարույց մոտեցումների, տարբեր տեսակետների ու դրույթների շարադրանք, դիդակտիկ ու գործնական նյութեր ու առաջադրանքներ (ծավալը՝ առնվազն 5 տպագիր մամուլ):
5. **Ուսումնամեթոդական աշխատանքների** թվում են ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ, լաբորատոր ձեռնարկները, դասընթացների կամ մոդուլների դասավանդման ծրագիր-մեթոդական ուղեցույցները.
   5.1. **Ուսումնամեթոդական ձեռնարկը** որևէ գիտության կամ գիտաճյուղի, ուսումնական առարկայի ուսումնասիրման, դասավանդման համար գրված մեթոդական և տեսական դրույթներ, ուղենիշներ պարունակող աշխատություն է:
   5.2. **Ուսումնաօժանդակ ձեռնարկը** ներառում է տվյալ մասնագիտությունը, առարկան, ծրագիրը կամ դասընթացը լավագույնս յուրացնելու համար լրացուցիչ թեմաների, խնդիրների, նեղ մասնագիտական հարցերի վերաբերյալ տեսագործնական բացատրություններ, ցուցումներ, հիմնավորումներ ու առաջադրանքներ:
   5.3. **Լաբորատոր ձեռնարկը** կոչված է օժանդակելու, օգնելու, ուղղորդելու ուսանողին՝ ինքնուրույն կատարելու հետազոտական, լաբորատոր, գործնական աշխատանքներ: Այն բովանդակում է առարկան, ծրագիրը կամ դասընթացը լավագույնս յուրացնելու համար լրացուցիչ թեմաների, խնդիրների, նեղ մասնագիտական հարցերի վերաբերյալ գործնական աշխատանքների, փորձերի նկարագրություն և տեսական համառոտ բացատրություն:
   5.4. Դասընթացների կամ մոդուլների դասավանդման **ծրագիր-մեթոդական**

ուղեցույցներում մանրամասն նշվում են դասընթացի/մոդուլի նպատակները, կրթական վերջնարդյունքները, դասավանդման ու գնահատման մեթոդներն ու մոտեցումները, պարապմունքների ձևերն ու դրանց բաշխումը՝ ըստ ժամերի, յուրաքանչյուր պարապմունքի բովանդակությունը, դասավանդման ու սովորողի ինքնուրույն աշխատանքի բովանդակությունը՝ երաշխավորված գիտակրթական ստորաբաժանման գիտական խորհրդի կողմից:

6. Ուսումնական ձեռնարկները, խնդիրների և վարժությունների ժողովածուները, լաբորատոր-գործնական պարապմունքների պրակտիկումները կոչված են հեշտացնելու տեսական դրույթների ընկալումն ու յուրացումը, առարկայականացնելու նյութը և ձևավորելու գործնական ու կիրառական հմտություններ:
7. Երաշխավորման ենթակա աշխատանքը պետք է համապատասխանի մասնագիտության Որակավորումների ոլորտային շրջանակի կամ կրթական ծրագրի պահանջներին, ներկայացնի դասընթացի կամ դրա՝ համապատասխան մոդուլի համար նախատեսված մասի (եթե դասագիրքը կազմված է մեկից ավելի իրար շարունակող մասերից) հիմնական բովանդակությանը:
8. Երաշխավորման ենթակա աշխատանքը պետք է ներկայացնի միայն ստույգ, գիտականորեն հաստատված և ճշգրիտ տեղեկատվություն, վարկածների վերաբերյալ տեղեկատվության ընդգրկման պարագայում՝ հստակ նշում պարունակի այդ մասին, օգտագործի միայն գիտականորեն շրջանառվող վարկածներ:
9. Երաշխավորման ենթակա աշխատանքի մեջ պետք է ապահովված լինեն պատշաճ հղումները (այդ թվում՝ էլեկտրոնային) օգտագործված բոլոր նյութերին և աղբյուրներին: Երաշխավորման ենթակա աշխատանքի գրականության մեջ հղումներով նախատեսված բոլոր նյութերը և աղբյուրները պետք է մշտապես հասանելի լինեն դասագրքի գործածության ողջ ժամանակահատվածում և պաշտպանված լինեն կիբերհարձակումներից:
10. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ երաշխավորվում են այն դասագրքերը և ուսումնական/ուսումնամեթոդական ձեռնարկները, որոնք հրատարակման են պատրաստվում ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի իրականացման, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի կարիքների, ինչպես նաև

համապատասխան ոլորտների մասնագետների համար:

11. Աշխատանք ներկայացնելիս հեղինակները (հեղինակների խմբերը) պետք է ստորագրեն Էթիկայի կանոնների պահպանման հայտարարագիր (Տե՛ս Հավելված 1), որով հավաստում են, որ հրապարակման ներկայացվող գիտական արդյունքները պատրաստելիս հետևել են ներքոհիշյալ սկզբունքներին.

11.1. Հեղինակները պետք է տրամադրեն հետազոտության և ուսումնասիրության հավաստի արդյունքներ: Հեղինակները պետք է ներկայացեն միայն ճշգրիտ փաստեր ու տվյալներ, տան բավարար տեղեկություններ, չօգտագործեն մասնավոր կարգով ձեռք բերված տեղեկություն՝ առանց առկա գրավոր համաձայնության, թույլ չտան տվյալների կեղծում ու զեղծարարություն:

11.2. Ներկայացված աշխատանքը չպետք է հրատարակված լինի նախկինում:

11.3. Հեղինակները պետք է ապահովեն աշխատության մեջ ներկայացվող արդյունքների սեփական լինելը: Յուրաքանչյուր փոխառված հատված կամ մեջբերում պարտադիր պետք է ուղեկցվի հղումով՝ հեղինակին ու սկզբնաղբյուրին: Չափազանց ծավալուն մեջբերումներն ու գրագողության ցանկացած ձև՝ ներառյալ չհղված մեջբերումները, վերաշարադրանքը կամ այլ անձի հետազոտության արդյունքների յուրացումը էթիկայից դուրս են և անընդունելի: **ԵՊՀ ԻՄ-ը առանց հղումների մեջբերումները համարում է գրագողություն:** Ակադեմիական անազնվություն է նաև սեփական հրապարակումներից առանց հղումների մեջբերումներ կատարելը, որոնք ցանկալի է օգտագործել հնարավորինս քիչ:

11.4. Հեղինակները պետք է խուսափեն աշխատանքի կրկնօրինակումից: Եթե աշխատանքի որոշ հատվածներ նախկինում հրատարակվել են, հեղինակը պետք է հղում անի ավելի վաղ հրապարակված աշխատությանը՝ նշելով տարբերությունները:

11.5. Հեղինակները չպետք է ներկայացնեն արդեն հրատարակություն հանձնված ու քննարկման փուլում գտնվող աշխատանք:

11.6. Պետք է նշվեն բոլոր այն անձանց ներդրումը, որոնք այս կամ այն կերպ մասնակցել են աշխատության ստեղծմանը:

11.7. Բոլոր նրանք, ովքեր նշանակալի ներդրում են ունեցել, պետք է դիտարկվեն

որպես համահեղինակներ: Ընդունելի չէ հեղինակների ցանկում ներառել այն անձանց, որոնք չեն մասնակցել գրքի ստեղծման աշխատանքներին:

11.8. Հեղինակները պետք է հարգեն գրախոսների աշխատանքը և վերացնեն նրանց կողմից նշված անճշտությունները կամ հիմնավորեն դրանք:

11.9. Եթե հեղինակները իրենց աշխատանքում նկատելի սխալներ կամ անճշտություններ են հայտնաբերել քննարկման փուլում կամ երաշխավորումից հետո, նրանք պետք է անհապաղ տեղեկացնեն երաշխավորողին:

11.10. Հեղինակը հնարավորություն ունի հանձնելուց հետո ետ պահանջելու իր աշխատանքը, քանի դեռ այն չի խմբագրվել:

2. ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ԳՐԱԽՈՍՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ

12. Երաշխավորման ենթակա աշխատանքի բնագիրը՝ հեղինակի (հեղինակների խմբի բոլոր անդամների) կողմից ստորագրված դիմումի և Էթիկայի կանոնների պահպանման հայտարարագրի հիման վրա քննարկվում է համապատասխան ամբիոնում, անհրաժեշտության դեպքում՝ նաև հարակից ամբիոններում: Հարցի դրական լուծման դեպքում քննարկման արձանագրության քաղվածքը, բնագրի և մյուս փաստաթղթերի փաթեթի հետ միասին ուղարկվում է ֆակուլտետի մեթոդական խորհուրդ: Ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշմամբ՝ բնագրերը քննարկվում են ֆակուլտետի գիտական խորհրդում, ապա ներկայացվում ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհրդին:
13. Մասնաճյուղի մեթոդական խորհուրդը երաշխավորման ենթակա աշխատանքի բնագիրը ուղարկում է գրախոսման (առնվազն երեք գրախոսի):
14. Երկու գրախոսողներ (արտահամալսարանական), պետք է լինեն տվյալ մասնագիտության գծով այլ բուհերի ամբիոնների առաջատար աշխատակիցներ (դոցենտ, պրոֆեսոր) կամ համապատասխան ոլորտի գիտության և արտադրության առաջատար մասնագետներ: Միևնույն կազմակերպությունից կարող է ընտրվել միայն մեկ գրախոս:
15. Երրորդ գրախոսը ընտրվում է ԵՊՀ հարակից ամբիոնի առաջատար մասնագետներից:

16. Որպես գրախոս չի կարող ընտրվել տվյալ ամբիոնի կամ ուսումնական ստորաբաժանման-աշխատակիցը:
17. Գրախոսականը պետք է լինի ընդգրկուն, բազմակողմանի և տա երաշխավորման ենթակա աշխատանքի բնագրի օբյեկտիվ գնահատականը, պարունակի դրանց մեթոդական արժեքների և թերությունների վերլուծությունը, գնահատվի գիտական մակարդակը, համապատասխանությունը ուսումնական պլաններին և առարկայական ծրագրերին, տրվի դրանց լուսաբանման նկարագրդման (պատկերազարդման) որակը, ձեռագրի կամ նրա առանձին մասերի (գլուխների, բաժինների) ծավալների և բովանդակության գնահատականը (Տե՛ս Հավելված 2): Գրախոսականի եզրակացության մեջ պետք է հիմնավոր և հստակ ձևակերպվի երաշխավորման ենթակա աշխատանքի բնագրի տպագրության երաշխավորման նպատակահարմարությունը (Տե՛ս Հավելված 3):
18. Գրախոսը պարտավոր է.
    18.1 հետևել գիտական օբյեկտիվության ու վարվելակարգի սկզբունքներին,
    18.2 տրամադրել գիտական անաչառ եզրակացություն,
    18.3 տալ հետազոտության արդյունքների՝ օբյեկտիվ ու հիմնավորված գնահատական, կատարել անհրաժեշտ առաջարկներ,
    18.4 տեղեկացնել աշխատանքի՝ այլ աշխատանքի հետ ցանկացած էական կամ մասնակի նմանության մասին,
    18.5 նշել հրատարակված համապատասխան աշխատությունները, որոնք պատշաճորեն մեջբերված կամ վկայակոչված չեն աշխատանքում:
19. Հակասական գրախոսականների դեպքում երաշխավորման ենթակա աշխատանքի բնագիրը ուղարկվում է լրացուցիչ գրախոսման:
20. Երաշխավորման ենթակա աշխատանքի վերաբերյալ դրական կարծիքների առկայության դեպքում դրանք ուղարկվում են հեղինակին (հեղինակային խմբին) անհրաժեշտ ուղղումներ կամ փոփոխություններ կատարելու նպատակով (եթե կա դրա անհրաժեշտությանը):
21. Երաշխավորման ենթակա աշխատանքի բնագրի վերաբերյալ բացասական գրախոսականների դեպքում ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհուրդը կարող է

առաջարկություն ներկայացնել ամբիոնին (ֆակուլտետին) լրամշակման համար:

22. Հեղինակի (հեղինակային խմբի) կողմից վերափոխված (լրամշակված) բնագիրը ներկայացվում է ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհուրդ, որին կցվում է ձեռագրում կատարված փոփոխությունների կամ հիմնավորված առարկությունների մասին տեղեկանքը:

23. Երաշխավորման ենթակա աշխատանքի ուղղված և ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհրդում քննարկված ու հրատարակման երաշխավորված բնագիր տարբերակը ներկայացվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

24. Երաշխավորման ենթակա աշխատանքի հրատարակման ֆինանսավորումը կարող է իրականացվել.

24.1. ԵՊՀ ԻՄ բյուջետային և արտաբյուջետային միջոցների հաշվին՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ ամբողջ տպաքանակը հանձնվում է ԵՊՀ ԻՄ գրադարանին, իսկ հեղինակներին հատկացվում է մինչև 10– ական օրինակ:

24.2. միջազգային, միջպետական, հանրապետական գիտակրթական, ներբուհական և այլ կազմակերպությունների ֆինանսավորմամբ. եթե ֆինանսավորող աղբյուրների կողմից դասագրքերի և ուսումնական ձեռնարկների տպաքանակի նկատմամբ Մասնաճյուղի գրադարանին հանձնելու վերաբերյալ սահմանափակումներ չկան, ապա տպաքանակի մի մասը, ըստ պայմանագրի, կարող է իրացվել:

24.3. տարբեր դրամաշնորհների և անհատ անձանց (այդ թվում նաև հեղինակի կամ հեղինակային խմբի) նպատակային ֆինանսավորմամբ. եթե ֆինանսավորող աղբյուրների կողմից դասագրքերի և ուսումնական ձեռնարկների տպաքանակի նկատմամբ Մասնաճյոուղի գրադարանին հանձնելու վերաբերյալ սահմանափակումներ չկան, ապա տպաքանակի մի մասը, ըստ պայմանագրի, կարող է իրացվել:

24.4. ՀՀ օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրների ֆինանսավորմամբ. ամբողջ տպաքանակը հանձնվում է ԵՊՀ ԻՄ գրադարանին, իսկ հեղինակներին հատկացվում է մինչև 10– ական օրինակ:

25. Տպագրության դեպքում տպաքանակի մի մասը հանձնվում է ԵՊՀ ԻՄ գրադարանին, որի քանակը սահմանվում է պայմանագրով, իսկ մյուս մասը համարվում է հեղինակի

(հեղինակների) սեփականությունը:

26. Տարբեր ֆինանսական աղբյուրների համաֆինանսավորմամբ հրատարակվող դասագրքերի և ուսումնական ձեռնարկների տպաքանակը, ըստ պայմանագրի, կարող է բաշխվել ֆինանսավորող կողմերի միջև ըստ ներդրված մասնաբաժինների: Այս դեպքում ԵՊՀ ԻՄ գրադարանին պետք է հանձնվի տպաքանակի առնվազն 50 տոկոսը, եթե ԵՊՀ ԻՄ-ը ֆինանսավորող կողմ է և 25 %-ը, եթե ԵՊՀ ԻՄ-ը չի մասնակցում ֆինանսավորմանը:
27. Երաշխավորման ենթակա աշխատանքի հրատարակումից հետո համապատասխան ֆակուլտետը և ամբիոնը կամ ԵՊՀ ԻՄ գրադարանը կազմակերպում են շնորհանդես (ներկայացում)՝ ներգրավելով տվյալ ոլորտի կրթական, գիտական և կազմակերպությունների համապատասխան մասնագետներին:

4. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

28. Սույն կանոնակարգը հաստատում է Մասնաճյուղի գիտական խորհուրդը:
29. Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել.
    29.1. Մասնաճյուղի տնօրենի,
    29.2. գիտական խորհրդի անդամի,
    29.3. Որակի կառավարման մշտական հանձնաժողովի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ես՝ _____-ս, որպես հրապարակման երաշխավորման ներկայացված _____ _____ աշխատանքի (համա)հեղինակ, հավաստում եմ, որ այն զերծ է գրագողության տարրերից, փաստերի կեղծումից և կեղծ մեջբերումներից: Մեջբերումները, որոնք կատարվել են տպագիր կամ էլեկտրոնային սկզբնաղբյուրներից, ինչպես նաև պաշտպանված թեզերից ու ատենախոսություններից, ունեն համապատասխան հղումներ:

Ես ծանոթ եմ «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության» և «ԵՊՀ ԻՄ-ում դասագրքերի և ուսումնամեթոդական այլ գրականության հրատարակման երաշխավորման գործընթացի» կանոնակարգերին և հավաստում եմ, որ հրապարակման ներկայացվող գիտական արդյունքներ պատրաստելիս հետևել եմ վերոնշյալ կանոնակարգերի սկզբունքներին:

«___»_____202_ թ

Անուն, ազգանուն _____

Ստորագրություն

Հավելված 2.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է կրթական ծրագրով նախատեսված բովանդակությանը:
2. Աշխատանքի բովանդակության ծավալն ու բարդությունը հիմնավորված են, տվյալ տարիքի սովորողների համար ապահովված է բովանդակության յուրացման հնարավորություն:
3. Աշխատանքի բովանդակությունը հնարավորություն է տալիս իրականացնելու սովորողների կրթական կարիքներին համապատասխան ուսուցում:
4. Ապահովված է աշխատանքի բովանդակության ներկայացման գիտականությունը:
5. Ապահովված է աշխատանքի բովանդակության մատչելիությունը:
6. Ապահովված է աշխատանքի բովանդակության գործնական-կիրառական ուղղվածությունը
7. Ապահովված են միջառարկայական կապերը:
8. Բովանդակությունը նպաստում է սովորողների քննադատական մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
9. Բովանդակությունը տրոհված է մասերի (բաժին, գլուխ, պարագրաֆ, դաս և այլն) սովորելուն հարմար եղանակով:
10. Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը հնարավորություն են տալիս կիրառելու ուսումնառության տարբեր եղանակներ:
11. Մեթոդական ապարատը նպաստում է բովանդակության յուրացմանը:
12. Մեթոդական ապարատը նպաստում է տարբեր կարողությունների տեր սովորողների ինքնուրույն ուսումնառությանը:
13. Մեթոդական ապարատը հնարավորություն է տալիս ստուգելու ուսումնառության արդյունքները:
14. Շարադրման լեզուն մատչելի է և համապատասխան է սովորողների տարիքինի, լեզվամտածողությանը, կարդալու, ըմբռնելու մակարդակին:
15. Նյութը շարադրված է տվյալ ուսումնական առարկային բնորոշ լեզվական ոճին համապատասխան:
16. Աշխատանքը նպաստում է սովորողների խոսքի մշակույթի զարգացմանը:
17. Աշխատանքի կառուցվածքը նպաստում է նրա արդյունավետ օգտագործմանը:

Հավելված 3.

ԳՐԱԽՈՍԱԿԱՆԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1 Աշխատանքի ամբողջական վերնագիրը:
2 Խնդրի համառոտ նկարագրությունը, որն ընկած է աշխատանքի հիմքում:
3 Ներկայացված աշխատանքի նորույթը:
4 Աշխատանքի արդիականությունը: Աշխատանքի գիտական կամ մեթոդական արժեքը:
5 Տեսական և կիրառական արժեքը:
6 Արդյունքների վերլուծությունը և դրանց մեկնաբանությունը, քննադատական մոտեցումը:
7 Հղումների հստակությունը և ամբողջական նյութի ինքնուրույնության աստիճանը, ձևավորման և շարադրանքի որակը:
8 Աշխատանքի կառուցվածքը և տրամաբանական հաջորդականությունը:
9 Շարադրանքի որակը (քերականություն, ուղղագրություն, եզրույթների հստակություն և այլն):

Գրախոսի Եզրակացությունը.

10 Երաշխավորել բնագրի հրապարակումը:
11 Թույլատրել բնագրի հրապարակումը՝ միայն հեղինակի կողմից լրամշակվելու (փոփոխություններ եւ լրացումներ կատարելու) պայմանով:
12 Մերժել ներկայացված բնագրի հրապարակումը:

Տեղեկություններ գրախոսի վերաբերյալ

13 Աշխատանքի վայրը (առանց հապավումների), պաշտոնը, գիտական կոչումը, գիտական աստիճանը, գրախոսի անուն, հայրանուն, ազգանունը, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, գրախոսի ստորագրությունը, գրախոսի ստորագրության հաստատումը աշխատանքի վայրի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով: